ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱԳՐԵՍԻՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱԳՆԱՊԱՅՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ասլանյան Ա.Հ, Ավետիսյան Լ.Ռ., Խաչիկյան Ն.Զ., Գասպարյան Խ.Վ. (Երևանի պետական բժշկական համալսարան, Երևան, Հայաստան)

aslanyanah@gmail.com, larisaravetisyan@gmail.com, nkhachikyan@rambler.ru, kgasparyan@aua.am

Ներկայացման ամս.՝ 18.10.19
գրախոսման ամս.՝ 15.01.20
տպագրության ընդունման ամս.՝ 06.02.20

Հետազոտությունը Երևան քաղաքի ավագ դպրոցներում սովորող 14-15 տարեկան դեռահասների առողջական վիճակի և հոգեհուզական վիճակի ու հարմարման առանձնահատկությունների ուսումնասիրմանը նվիրված աշխատանքի մի հատվածն է, որի նպատակն է պարզել նրանց մոտ ագրեսիվության և տագնապայնության դրսևորման առանձնահատկությունները: Հետազոտությանը մասնակցել են Երևան քաղաքի ավագ դպրոցներում սովորող 14-15 տարեկան 439 դեռահասներ (250 աղջիկ և 189 տղա):

Ըստ ստացված տվյալների դեռահասների մեծ մասին բնորոշ է միջին մակարդակի ագրեսիվությունն ու տագնապայնությունը, ընդ որում դրանց ցուցանիշների տարբեր մակարդակների միջև հայտնաբերվեցին ուղիղ և հակադարձ կոռելյացիոն կապեր: Սակայն ստացված արդյունքները բնութագրում են միայն երևանաբնակ դեռահասների ագրեսիվության և տագնապայնության դրսևորման առանձնահատկությունները: Մեր կարծիքով անհրաժեշտություն է զգացվում ընդլայնել հետազոտության ընտրանքը ինչպես տարբեր մարզերի՝ մարզկենտրոնների և գյուղերի, այնպես էլ Արցախի միևնույն տարիքի դեռահասների շրջանում՝ հայ դեռահասների մոտ ագրեսիվության և տագնապայնության դրսևորման առանձնահատկությունների համեմատական վերլուծության համար:

Հանգուցային բառեր՝ *դեռահաս, ավագ դպրոց, հոգեվիճակ, ագրեսիվություն, տագնապայնություն:*

Դեռահասային տարիքը նշանավորվում է ինչպես ֆիզիկական, հոգեբանական ու ֆիզիոլոգիական բուռն զարգացմամբ, այնպես էլ սոցիալական ակտիվության վերաիմաստավորմամբ: Նոր սոցիալական միջավայրում դեռահասները միմյանց և մեծահասակների հետ ստեղծում են տարբեր փոխհարաբերություններ: Դրանց ձևավորման հիմքում ընկած են բազմաբնույթ

գործողություններ և արարքներ, որոնց բնույթը պայմանավորող գործոնների մեջ էական նշանակություն ունի ագրեսիվությունը: Որոշ գործոններ դեռահասների մոտ կարող են բերել ագրեսիվության մակարդակի բարձրացման: Ն. Ա. Դուբինկոն առանձնացնում է 3 խումբ գործոններ՝ սեռական հորմոնների կտրուկ աճ (հատկապես տեստոստերոնի կտրուկ աճ տղաների մոտ), գլխուղեղի օրգանական ախտահարումներ (մենինգիտ, արախնոիդիտ, վնասվածքներ) և մեծահասակների ցուցաբերած վերաբերմունք (ծնողներ և ուսուցիչներ) [4]: Սակայն, ինչպես նշում է Օ. Վ. Խուխլաևան, դեռահասային տարիքում առավել կարևորվում են մարդու հոգեկան աշխարհի ձևավորման անհատական առանձնահատկությունները [8]: Ըստ Վ. Ի. Դոլգովայի, դեռահասների ագրեսիվ վարքագծի տարբեր ձևերի արտահայտման վրա ազդում են և՛ նրանց հուզական վիճակը, և՛կենսաբանական ու հոգեբանական գործոնները, և՛ սոցիալական միջավայրը [3]:

Դեռահասային տարիքը դժվարությունների, ճգնաժամերի ու փորձառությունների շրջան է, որը բնորոշում է մանկական աշխարհընկալման ավարտը և դեռահասի մոտ առաջանում են հոգեբանական անբարեհարմարության և տագնապայնության զգացումներ[2]:Այն կարող է առաջանալ և՛ արտաքին (ընտանեկան դրություն, առաջադիմություն, հեղինակություն, ուսուցիչների, ծնողների և դասընկերների հետ փոխհարաբերություններ), և՛ ներքին (ներանձնական կոնֆլիկտ և նեգատիվ հուզական փորձ) պատճառներից: Դասարանի և դպրոցի փոփոխությունը ևս դեռահասի մոտ կարող է առաջացնել տագնապայնության զգացողություն, որը պայմանավորված է նոր պայմաններին և նոր մարդկանց հարմարվելու անհրաժեշտությամբ [6, էջ 26-34, 9]:

<u>Հետազոտության նպատակը</u>՝Այս հետազոտությունը Երևան քաղաքի ավագ դպրոցներում սովորող 14-15 տարեկան դեռահասների առողջական վիճակի և հոգեհուզական վիճակի ու հարմարման առանձնահատկությունների ուսումնասիրմանը նվիրված աշխատանքի մի հատվածն է, որի նպատակն է պարզել նրանց մոտ ագրեսիվության և տագնապայնության դրսևորման առանձնահատկությունները:

***<u>Հետազոտության նյութը և մեթոդները</u>*:** Հետազոտությունն անցկացվել է Երևան քաղաքի ավագ դպրոցներում սովորող 14-15 տարեկան 439 դպրոցականների շրջանում:Ըստ սեռի կազմվել է հետազոտվողների 2 խումբ՝ 250 աղջիկ և 189 տղա:

Ավագ դպրոցականների ագրեսիվության և տագնապայնության ցուցանիշների արտահայտվածության հետազոտության նպատակով օգտագործվել են հոգեբանական հետևյալ մեթոդները.

1. Ա. Բասսի և Ա. Դարկի ագրեսիվության մակարդակի գնահատման հարցաշար,

2. Զ. Սպիլբերգի և Յու. Խանինի տագնապայնության մակարդակի գնահատման սանդղակ:

Ա. Բասսի և Ա. Դարկի ստեղծած համանուն հարցաշարը ագրեսիվության մակարդակի գնահատման համար հաճախ կիրառվող հարցաշարերից է [1, էջ 49]: Հարցարանի միջոցով բացահայտվում են ագրեսիվության հետևյալ ցուցանիշները՝ ֆիզիկական ագրեսիա, բանավոր խոսքային (վերբալ) ագրեսիա, անուղղակի ագրեսիա, նեգատիվիզմ նյարդայնություն (դժգոհություն), կասկածամտություն, վիրավորանք և ինքնաագրեսիա կամ մեղքի զգացում:

Դեռահասների անձնային և իրավիճակային տագնապայնության մակարդակը որոշվել է Սպիլբերգեր-Խանինի սանդղակով [5, 7, էջ 59-63], որտեղ ներառված են իրավիճակային կամ ռեակտիվ և անձնային տագնապայնությունը:

Արդյունքներ և վերլուծություն: Օգտագործված հարցաթերթերի միջոցով ստացվեցին դպրոցական դեռահասների ագրեսիվության և տագնապայնության ցուցանիշների տվյալները:

Բաս-Դարկի հարցարանի միջոցով դեռահասների ագրեսիվության տարբեր ցուցանիշների մակարդակների որոշման հետազոտությամբ պարզվեց, որ աշակերտներին հիմնականում բնորոշ է միջին մակարդակի ագրեսիվությունը: Դպրոցականներից յուրաքանչյուր հինգերորդը ցուցաբերում է ցածր ագրեսիվություն: Ագրեսիվության ցուցանիշներից նեգատիվիզմը ցածր (37,1%) և միջին (35,3%) մակարդակներում արտահայտված է գրեթե հավասարաչափ, բայց միևնույն ժամանակ դեռահասների շուրջ մեկ քառորդին բնորոշ է բարձր նեգատիվիզմը: Վիրավորանքը հիմնականում բնորոշ չէ 14-15 տարեկան դպրոցականներին (67%-ն ունի ցածր մակարդակ):Թեպետ դեռահասների մեծ մասն (60,6%) ունի մեղքի զգացման միջին մակարդակ, այնուհանդերձ անհանգստացնող է այն աշակերտների քանակը, ովքեր ունեն ուժեղ արտահայտված մեղքի զգացում (31,9%): Իրականացրած խմբային վերլուծությունը բացահայտեց սեռային տարբերություններ: Այսպես՝ ֆիզիկական ու բանավոր ագրեսիայի և նեգատիվիզմի բարձր մակարդակներն առավել բնորոշ են արական սեռին, իսկ անուղղակի ագրեսիայի, նյարդայնության, վիրավորանքի և մեղքի զգացման բարձր մակարդակները՝ իգական սեռին ($P<0,05$): Ընդ որում՝ անուղղակի ագրեսիայի և մեղքի զգացման ցուցանիշների դեպքում հավաստիորեն բարձր է միջին մակարդակ ունեցող տղաների քանակը: Ուշադրության է արժանի այն փաստը, որ թեև աղջիկների զգալի մասին բնորոշ է վիրավորանքի ցածր մակարդակը (58,4%), այնուհանդերձ վիրավորանքը հավաստի բնորոշ չէ տղաներին, որոնց 4/5-ը բնավ նեղացկոտ չէ($P<0,05$):

Այսբերգներ-Խանինի սանդղակի միջոցով սովորողների տագնապայնության հետազոտման արդյունքում ստացվեցին նրանց իրավիճակային և անձնային տագնապայնության տվյալները: Ըստ այդ տվյալների՝ դեռահասների մեծ մասին բնորոշ է տագնապայնության միջին մակարդակը: Սովորողներից յուրաքանչյուր տասներորդն ունի տագնապայնության ցածր

մակարդակ Այնուհանդերձ, աշակերտների շուրջ ¼-ին բնորոշ է անձնային տագնապայնության բարձր մակարդակ: Տագնապայնությունը գնահատելիս ակնառու են սեռային հավաստի տարբերությունները: Իգական սեռի ներկայացուցիչներին, ի տարբերություն արական սեռի, հատուկ է բարձր անձնային տագնապայնությունը: Տղաների մոտ տագնապայնության բարձր մակարդակը մոտ երկու անգամ հազվադեպ, բայց ցածր մակարդակը գրեթե երկու անգամ մեծ է, քան աղջիկների մոտ: Իրավիճակային տագնապայնությունը ևս ավելի բնորոշ է աղջիկներին. դրա բարձր մակարդակը մոտ երեք անգամ ավելի հաճախ է հանդիպում նրանց մոտ: Փաստորեն, ավագ դպրոցի 10-րդ դասարանում սովորող դեռահաս աղջիկներին բավական բնորոշ է բարձր տագնապայնությունը:

Ավագ դպրոցում ուսումնառության սկզբին անցկացված հարցման արդյունքների վերլուծությունից պարզ է դառնում, որ 14-15 տարեկան դեռահասները բավական լավ են հարմարվում ուսումնակրթական և միևնույն ժամանակ սոցիալական նոր միջավայրին:Ինչպես և ակնկալվում էր, այս տարիքային խմբում բավական արտահայտված է շրջապատի նկատմամբ նեգատիվ վարքագիծը, որը սակայն չի վերածվում թշնամական վերաբերմունքի: Դեռահասների մեծ մասին բնորոշ է ոչ ագրեսիվ պահվածքը: Նրանք բարյացակամ են տրամադրված շրջապատի նկատմամբ՝ առանց զայրույթի և դժգոհության: Ուշադրության է արժանի, որ դեռահասների շրջանում բավական տարածված է մեղքի զգացումը և նրանց մի զգալի մասը համարում է, որ իրենք վատն են և վնաս են տալիս իրենց շրջապատին:Մեծ մասամբ 14-15 տարեկան դեռահասները բավական հանգիստ են՝ առանց լարվածության, շփվող են և ակտիվ: Սակայն նրանց զգալի մասն ունի բարձր տագնապայնություն, որը խոսում է ինքնավստահության, շփման ցանկության պակասի, կոնֆլիկտայնության, նյարդային լարվածության մասին: Ավելի քիչ են ցածր տագնապային դպրոցականները, որոնք թեև բավականաչափ շփվող են, բայց առանձնանում են խիստ արտահայտված հանգստությամբ, հուզական մեծ զսպվածությամբ կամ սառնությամբ:

Տագնապայնության և ագրեսիվության առանձին ցուցանիշների միջև գոյություն ունեցող փոխադարձ կապերի առանձնահատկությունները պարզելու համար կատարվեց կոռելյացիոն վերլուծության:Տագնապայնության և ագրեսիվության ցուցանիշների տարբեր մակարդակների միջև հիմնականում հայտնաբերվեցին ուղիղ կոռելյացիոն կապեր (նկ. 1): Ագրեսիվության ցուցանիշներից՝ նեգատիվիզմի (նգ), և անձնային տագնապայնության (ատ) միջև հայտնաբերվեց հակադարձ ուղղվածության կապ, իսկ իրավիճակային տագնապայնության (իտ) հետ կապ չհայտնաբերվեց: Ագրեսիվության ցուցանիշներից՝ ֆիզիկական ագրեսիայի (ֆա), և տագնապայնության ցուցանիշների միջև կապ չհայտնաբերվեց: Հետևաբար՝ կարելի է ենթադրել, որ ինչքան սթրեսային իրավիճակում հայտնված դեռահասների մոտ մեծ է հուզական

հակազդումը և տարբեր իրավիճակներ որպես սպառնալիք ընկալելու միտումը, այնքան ավելի նրանք շուտ են գրգռվում, կարող են նույնիսկ բռնկվել, կտրուկ և կոպիտ վարվել, չվստահել մարդկանց, դժգոհել, զայրանալ, հատուկ վերաբերմունք ցուցաբերել իրենց և շրջապատի նկատմամբ՝ համոզված լինելով, որ իրենք վատն են: Ինչքան դեռահասի նախատրամադրվածությունը տագնապին մեծ է, այնքան ավելի արտահայտված է այլ մարդկանց նկատմամբ ունեցած բացասական վերաբերմունքը՝ բառային դիմումների կամ անուղղակի ճանապարհով՝ բամբասանքների, կատակների և զայրույթի անորոշ, անկանոն բռնկումների ձևով:



Նկար 1. *Կապերը տագնապայնության և ագրեսիվության ցուցանիշների միջև*

Ծանուցում՝

Ուղիղ կոռելյացիոն կապ. վստահելիության մակարդակը 0,01

Ուղիղ կոռելյացիոն կապ. վստահելիության մակարդակը 0,05

Հակադարձ կոռելյացիոն կապ. վստահելիության մակարդակը 0,05

Միջխմբային վերլուծությամբ պարզվեց, որ տղաների և աղջիկների մոտ հիմնական տարբերությունները դիտվում են տագնապայնության ցուցանիշների և ագրեսիվության ցուցանիշներից՝ վիրավորանքի (վր), բանավոր ագրեսիայի (բա) ու կասկածամտության (կս) միջև առկա կապերի դեպքում: Արական սեռի ներկայացուցիչների մոտ որևէ կապ չհայտնաբերվեց տագնապայնության և վիրավորանքի ու բանավոր ագրեսիայի միջև, սակայն տագնապայնության և կասկածամտության միջև կապ հայտնաբերվեց միայն նրանց մոտ: Ստացված արդյունքը թույլ է տալիս եզրակացնել, որ իգական սեռի ներկայացուցիչների մոտ տագնապի վիճակի դրսևորման հակվածության դեպքում ընդգծվում է այլ մարդկանց նկատմամբ ունեցած բացասական զգացմունքների արտահայտումը՝ բառային դիմումների (վեճ, բղավոցներ, ճիչեր, սպառնալիքներ, անեծքներ, հայհոյանք) միջոցով, ինչպես նաև զայրույթով, անբավարարվածության զգացումով, դժգոհությամբ: Սակայն տղաների մոտ տագնապի վիճակի դրսևորման հակվածության դեպքում մեծանում է

մարդկանց նկատմամբ անվստահության և զգույշ վերաբերմունք դրսևորելու հակումը:

Ստացված արդյունքները թույլ չեն տալիս ենթադրելու, որ առկա ուղիղ և հակադարձ նշանակալից կապերը ընդհանրապես վերաբերում են դեռահասության տարիքի բոլոր ներկայացուցիչներին և արտահայտում ագրեսիվության և տագնապայնության դրսևորման առանձնահատկությունները: Մեր կարծիքով անհրաժեշտություն է զգացվում ընդլայնել հետազոտության ընտրանքը ինչպես տարբեր մարզերի՝ մարզկենտրոնների և գյուղերի, այնպես էլ Արցախի միևնույն տարիքի դեռահասների շրջանում: Կան մտադրություններ հետագայում իրականացնելու նույնատիպ հետազոտություն նաև Արցախում և համեմատել ստացված արդյունքները ըստ տարբեր մարզերի, մայրաքաղաքի և Արցախի տվյալների:

Գրականություն

1. **Արզումանյան Ս. Ջ, Մկրտչյան Ս. Շ. , Սարգսյան Վ. Ժ.** Կիրառական հոգեբանության պրակտիկում. - Եր. Զանգակ-97: 2002. - 392 էջ
2. **Артюхова Т.Ю**. Психологические механизмы коррекции состояния тревожности личности.: Дисс...к.пс.наук /Т.Ю. Артюхова. - Новосибирск, 2000.– 197с.
3. **Долгова В. И., Иванова Л. В., Банщикова А. И.** Психологические особенности агрессивного поведения подростков // Научно-методический электронный журнал «Концепт». – 2015. – Т. 31. – С. 11–15. – URL: http://e-koncept.ru/2015/95509.htm.
4. **Дубинко Н.А.** К проблеме условий и движущих факторов агрессии // Социально- педагогическая работа. – № 4.– 1997. С.85–92
5. **Казарян Г. А.** Значение психологических показателей в просессе отбора призывников. Дис... к.пс.н., Ереван, 2010, 190 с.
6. **Микляева А.В.** Школьная тревожность: диагностика, профилактика, коррекция / А.В. Микляева, Румянцева П.В. - СПб.: Речь, 2007.–248 с.
7. **Райгородский Д.Я**. Практическая психодиагностика. Методики и тесты. Учебное пособие. – Самара, 2006. – 672с.
8. **Хухлаева, О. В.** Психология подростка / О. В. Хухлаева. – М. : Владос, 2008. – 313 с.
9. **Wang, J., Hu, S., & Wang, L.** (2018). Multilevel analysis of personality, family, and classroom influences on emotional and behavioral problems among Chinese adolescent students. PLoSONE, 13(8), 1–16. https://doi.org/10.1371/journal.pone.0201442.

ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ ТРЕВОЖНОСТИ И АГРЕССИВНОСТИ ПОДРОСТКОВ, ОБУЧАЮЩИХСЯ В СТАРШИХ ШКОЛАХ ГОРОДА ЕРЕВАН

Асланян А.Г., Аветисян Л.Р., Хачикян Н.З., Гаспарян Х.В. (Ереванский Медицинский Государственный Университет, Ереван, Армения)

Данное исследование является частью работы, посвященной изучению состояния здоровья, психоэмоционального состояния и особенностей адаптации подростков в возрасте 14-15 лет, обучающихся в старших школах города Ереван. Целью исследования было выявление особенностей проявления тревожности и агрессивности среди подростков. В исследовании приняли участие 439 подростков (250 старшеклассниц и 189 старшеклассников) в возрасте 14-15 лет, обучающихся в старших школах города Ереван.Результаты исследования показали, что большинству подростков характерен средний уровень тревожности и агрессивности.

Следовательно, было бы целесообразнее расширить исследование, вовлекая как старшеклассников из разных регионов Армении, так и учащихся старших школ из Арцаха для общей и сравнительной характеристики особенностей проявления тревожности и агрессивности армянских подростков.

Ключевые слова: *подросток; старшая школа; психическое состояние, агрессивность; тревожность.*

THE EXPRESSION OF AGGRESSION AND ANXIETY AMONG HIGH SCHOOL PUPILS OF YEREVAN CITY

Aslanyan A. H., Avetisyan L. R., Khachikyan N.Z., Gasparyan Kh.V. (M. Heratsi Yerevan State Medical University,Yerevan, Armenia)

The study was focused on health of 14-15 years old adolescents from Yerevan high schools. We aimed to determine whether certain social and emotional habits of high school students are associated with achieving and maintaining a state of mental and emotional well-being. The study involved 439 (250 female and 189 male) 10th grade high school students in Yerevan. Most adolescents are characterized by moderate levels of aggression and anxiety.

In our opinion, there is a need to expand the sample of research both in different marzes, regional centers and villages, as well as in adolescents in Artsakh Republic.

Key words: *adolescent, high school, psychic state, aggression, anxiety.*